

361 [ԳԱՅԻՐԵՅ]

Հ-25

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ-ԳԱՀԻՐԷ (ԵԳԻՍՏՈՒ)

2, ՇԷՐԻՑ ՓՈՂՈՑ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

(ԲԱՐԵՓՈՒՈՒԱԾ)

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԳԱՀԻՐԷ

1913

370
1996-4u

EROS . 20 .
AR 2010

SECRET
TOP SECRET

1 MAR 2010

078
100-3001

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

05.06.2013

43.205

361[ԳՄՀԻՐԷ]

Σ-25

սժ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ

ԿԵԳՐՈՆԱՏԵՂԻ-ԳԱՀԻՐԷ (Եզիպոս)

2, ՇԵՐԻՑ ՓՈՂՈՑ



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ
(ԲԱՐԵՓՈՒՄ)

1004
15216

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ
1913

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գահիրե , 7 Մայիս 1906

Վսեակախոյ Տեարֆ ,

Պատիւ ունեցալ ստանալու ձեր Ապրիլ 12 անաթիւ նամակը , որով բարեհաճած էք ինձի յղել «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ» անուամբ ձեր հիշեցած Բարեգործական Ընկերութեան Կանոնագրին մէկ օրինակը :

Խրատումք ունիք մտածելու թէ Ն. Բ. Խօսիլին Կառավարութիւնը անենաւե՞ծ բարեացախարութեամբ միայն կրնար նկատել այսպիսի հաստատութիւն մը , որուն գերագնացօրէն եւ բացարձակապէս մարդասիրական հանգանակքը գովեսի միայն արժանի է :

Կը շնորհաւորեմ ձեզ որ Հայոց նիւթնիկն եւ բարոյական վիճակին բարեբաւնսն հոգածու կը զննուիք , եւ Կառավարութիւնը ձանջնալով այդ գործին օգտակարութիւնը , յաջողութիւն կը մտադրեմ անոր :

Ընդունեցեք , Վսեակախոյ Տեարֆ , իմ խորին յարգանքիս հաւաստիքը :

(Ստոր .) ՄՈՒՍԹԱՅԱ ՖԷՀՄԻ

ՎՍԵՄ. ՊՅՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ
» ԵԱԳՈՒՊ ՓԱՇԱ ԱՐԹԻՆ

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ.— ՆՊԱՏԱԿ.— ՀԱՆԳԱՄԱՆՔ

Յ Օ Դ Ո Ւ Ա Մ Ի .

Եզրկարտուսի մէջ վսեմ. Պօղոս փառաւորի նախածեռնութեամբ հիմնուած է ընկերութիւն մը «ՀԱՅԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ» անուամբ, որուն նպատակն է՝

Ա) Ատիաբնակ Հայ ժողովուրդին մտաւոր և բարոյական զարգացմանը նպաստել :

Բ) Անոր նիւթական և տնտեսական կացութիւնը բարւոյցելու աշխատել, և

Գ) Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որ և է ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել :

Ընկերութիւնը էապէս մարդասիրական է. որ և է քաղաքական հանձնարար չունի : Այս պայմանը հիմնական է :

ԿԵԴՐՈՆ.— ՏԱՐԵՇՐՁԱՆ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 2.

Ընկերութեան կեդրոնը և կեդրոնական վարչական ժողովը Գահիրէ կը գտնուին :

Տարեշրջանը կը սկսի ամէն տարուան Յունվարի առաջին օրը :

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 3.

Ընկերութեան անդամ ըլլալու համար՝ պէտք է կեդրոնական վարչ. ժողովին կամ ստորև նշանակուած Մասնաճիւղներէն մէկուն Տեղական ժողովին խնդրանք ներկայացնել, և կամ երկու անդամի կողմէն ներկայացուիլ : Այդ ժողովը՝ նիստին ներկայ գտնուող անդամներու մեծամասնութեամբ կը քուէարկէ ընդունելութիւնը, յետադայ 13րդ Յօդուածին տրամադրութեանց համաձայն :

Այսպէս՝ կարող է անդամակցիլ, առանց սեռի կամ դաւանանքի խտրութեան, ամէն հայ որ յանձն կ'առնէ յարգել ներկայ կանոնադիրը և կանոնաւորապէս հատուցանել իր անդամավճարը :

ՄՈՒՏՔԻ ՏՈՒՐՔ.— ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 4.

Միութեան ամէն անդամ, իր ընդունելութեան ժամանակ, պարտաւոր է վճարել մուտքի տուրք մը, որուն քանակը ինք ազատ է որոշելու, բայց որ 10 Եգ. Ղրուշէ նուազ չի կրնար ըլլալ : Ասկէ զատ՝ պարտի վճարել նաև ամսական բաժնեկիւն մը՝ որուն քանակը նմանապէս իր կամքին թողուած է, բայց որ եղիպտոսի համար 5 Եգիպ. Ղրուշէ և ուրիշ երկիրներու համար՝ տեղւոյն դրամական միութեան համեմատ աւելի կամ նուազ համարժէք (*) գումարէ մը պակաս չի կրնար ըլլալ :

(*) Մուտքի տուրքի նուազագոյն սակը՝ Օսմ. Ղրուշ 10 (մէճիտիէն 20 էն), ֆրանք 2,50, շիլին 2, տօլար 0,50 կամ թուլլի 1 : Ամսաբաժնի նուազագոյն սակը՝ Օսմ. Ղրուշ 5 (մէճիտիէն 20 էն), ֆրանք 1,25, շիլին 1, տօլար 0,25 կամ թուլլի 0,50 :

Անդամները ազատ են միանալու իճարել մէկ տարուան բոլոր ամսական բաժնեկիւնները :

ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄՆԵՐ.— ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄՆԵՐ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 5.

Ա.— Կեդր. վարչ. ժողովը՝ Բարերար Անդամ տիպոսը կուտայ այն անձերուն որ մէկ անդամէն գէթ հազար անդլիական ոսկիի նուէր մը կ'ընեն Միութեան :

Բ.— Նոյնպէս Պատուոյ Անդամ տիպոսը կուտայ այն անձերուն որ մէկ անդամէն գէթ չորս հարիւր անդլիական ոսկի կը նուիրեն Միութեան :

Բաց աստի՛ կեդր. վարչ. ժողովը կրնայ այդ տիպոսներէն մին կամ միւսը տալ այն անձերուն որ բացառիկ կամ նշանաւոր ծառայութիւններ կը մատուցանեն Միութեան : Այս որոշումը օրինաւորապէս կրնայ տրուիլ միայն՝ եթէ կեդր. վարչ. ժողովը բաղկացնող անդամներուն աւնուազն երեք քառորդին կողմէն ընդունուի :

Իրաւամբ Պատուոյ Անդամ են՝ անդամակցի կեդր. վարչ. ժողովի անդամները որ Միութիւնը հիմնելու նպատակով են (10րդ Յօդ.) :

ՎՏԱՐՈՒՄ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 6.

Որ և է անդամ, երբ անարժան վարմունք մը ունենայ, Ընկերութեան անդամներու ցանկէն կը ջնջուի կեդր. վարչ. ժողովին կողմէ՝ նիստին ներկայ գտնուող անդամներու երկու երրորդին մեծամասնութեամբ, յետադայ 13րդ Յօդուածին մէջ կանխատեսուած պայմաններու համաձայն :

Իր անդամավճարները կանոնաւորապէս չի հատուցանող որ և է անդամ ինքնին կը դադրի Ընկերութեան մաս կազմելէ :

ՄԻՈՒՅԵԱՆ ՀԱՍՈՑՆԵՐԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 7 .

Միութեան հասոյթները կը կազմեն՝

Ա. Մուտքի տուրքերը ,

Բ. Ամսական բաժնեգինները ,

Գ. Նուիրատուութիւններ ,

Դ. կտակներ ,

Ե. Կեդր. վարչ. Ժողովի կողմէ ստեղծուած ու է հասոյթի սղբիւրներ :

ՀԱՍՈՑՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒՅԻՒՆ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 8 .

Դրամագլուխի հաշուին պիտի յատկացուին՝

Ա. Մուտքի տուրքերը ,

Բ. Ամսական բաժնեգիններու մէկ վեցերորդը , և

Գ. Զուտ գումարը կամ արժէքը այն կտակներուն կամ նուիրատուութեանց՝ որ կտակարարներու կամ նուիրատուներու կողմէն յատկապէս նշանակուած կանխորոշ նպատակի մը համար եղած չեն :

Ընկերութեան դրամագլուխը անձեռնմխելի է : Այս պայմանը հիմնական է :

Սոյն դրամագլուխի հաշուին պատրաստ գումարը կեդր. վարչ. Ժողովի կողմէ պիտի վերածուի՝ պետական կամ ուրիշ առաջնակարգ արժեթուղթներու , և կամ քաղաքի մէջ հասուծաբեր անշարժ կալւածներու :

Անդամավճարներու գումարը (դրամագլուխի հաշուին անցած վերոյիշեալ մէկ վեցերորդը զեղչուելէն յետոյ) և դրամագլուխի հաշուին անցուած արժեթուղթներուն գուտ տոկոսները՝ կեդր. վարչ. Ժողովի ձեռամբ տարուէ տարի պիտի գործածուին Միութեան նպատակին պահանջած ծախքերուն , ըստ Յօդ. 1ի տրամագրութեանց :

Կեդր. վարչ. Ժողովը պիտի որոշէ իր ստեղծած հասոյթի ուրիշ արժեքներէն գոյացած որ և է գումարի յատկացումը և գործածութիւնը :

Գալով այն նուիրատուութեանց կամ կտակներուն՝ որ մասնաւոր կանխորոշ նպատակի մը համար եղած են , անոնք պիտի յատկացուին նուիրատուներուն կամ կտակարարներուն կողմէ նախատեսուած բուն նպատակին :

ԸՆԿԱԼԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՆԴՈՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՏՈՐԱԳՐՈՒՅԻՒՆԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 9 .

Ա.— Մուտքի տուրքերը , բաժնեգինները , նուիրատուութիւնները , և ընդհանրապէս որ և է անունով Ընկերութեանս վճարելի կամ յանձնելի գումարներ և արժեթուղթներ , կրնան օրինաւորապէս ընկերութեան համար պահանջուիլ կամ գանձուիլ և կամ անոր վճարուիլ , միմիայն կեդր. վարչ. Ժողովի Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներին մէջուան , և ասոնց բացակայութեան՝ կեդր. վարչ. Ժողովին կողմէ նշանակուած անդամին , ինչպէս և Գանձապետին կամ իր փոխանորդին հաւաքական ստորագրութիւնը կրող ընկալագիրներու կամ անորրապիրներու փոխարէն , ի բաց քուտալ Մասնաճիւղներուն կողմէ ըլլալիք դանձումներուն վերաբերեալ այն տրամագրութիւնները՝ որոնց մասին պիտի խօսուի 18րդ Յօդուածին մէջ (Ա. հատուած) :

ԹՂԱԿՑՈՒՅԵԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՍՑԷ

Բ.— Ամէն թղթակցութիւն և հաղորդակցութիւն՝ առանց բացառութեան՝ հարկ է ուղղուին Ատենապետին , Միութեան կեդրոնատեղին , Գահիրէ :

ՋԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԷ ՂՐԿՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՑԷ

Գ.— Զանազան տեղերէ ղրկուած բոլոր նուէրները և ու է դրամ պէտք է միմիայն ուղղուին Ընկերութեան Գանձապետին , իր կեդրոնատեղին՝ Գահիրէ :

Կ Ե Գ Բ Ո Ն Ա Կ Ա Ն Վ Ա Բ Ձ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՄ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 10.

Ա.— Կեղր. վարչութեան կեդրոնավայրն է Գահիրէ: Առնուազն 9 և առ առաւելն 15 անդամներէ կը բաղկանայ: Կեդրոնական վարչական ժողովի և Մասնաճիւղներու Տեղական ժողովներու անդամներուն՝ ստորև նախագծուած պաշտօնները էապէս անվճար են:

Ինչպէս որ Յօդ. 1ի մէջ ըսուած է՝ Ընկերութիւնը որ և է քաղաքական հանդամանք չունի. Ուստի, քաղաքական քօմիթէի մը պատկանող որ և է անձ չի կրնար անդամակցիլ՝ ոչ Կեղր. վարչ. ժողովի և ոչ ալ Տեղական ժողովներուն:

Կեղր. ժողովը ներկայիս հետևեալ կերպով կազմուած է, բացի այս յօդուածիս Գ. հատուածի տրամադրութիւնը.

Տեարք

- ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ, Ա.Տեևապէտ
- ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ } Փոխ-Ա.Տեևապէտ
- ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՈՆ ՊԷՅ }
- ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ, Ա.Տեևադպիր
- ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ, Գանձապէտ
- ԱՌԱՐԵՆ ԳԷՅ ՆՈՒՊԱՐ,
- ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆ,
- ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ՇԷՐԻՏՃԵԱՆ,
- Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՊԷՅ,

Բ.— Կեղր. վարչ. ժողովի նորոգումը մասնակի կերպով տեղի պիտի ունենայ երեք ասորին անգամ մը, յատենի Ընդհանուր ժողովի և այնպիսի եղանակաւ որ ամբողջական նորոգումը 9 տարուան մէջ կատարուի:

Սոյն տրամադրութեան կիրարկման գալով, առաջին անգամ ժողովը հրամարման կարգը վիճակաւ կ'որոշէ. անդամներու փոխանակումը անգամ մը այսպէս հաստատուելէն յետոյ, նորոգումը տեղի կ'ունենայ ընտրութեան առաջնութեան կարգաւ:

Շրջանաւարտ անդամները միշտ վերընտրելի են:

Ամսական գէթ Ե. Գ. 25 ամսավճար հատուցանող անդամները միայն կրնան Կեդրոնական վարչական ժողովին անդամակցիլ:

Գ.— Ամէն անգամ որ Կեղր. վարչ. ժողովը 15է պակաս անդամներէ բաղկացած ըլլայ՝ կրնայ առժամայէս ընտրել մէկ կամ աւելի անդամներ, մինչև որ այդ թիւը ամբողջանայ:

Ընդհանուր ժողովը, սոյն ընտրութեանց յաջորդող առաջին գումարմանը մէջ, անոնք կը վաւերացնէ և կամ ուրիշներ կ'ընտրէ վերջնապէս:

Եռամեայ շրջանի մը միջոցին ընտրուած որ և է վարիչ անդամի մը համար, վարչական պաշտօնին իննամեայ տևողութենէն կը զեղչուի այն ժամանակամիջոցը՝ որ մինչև իր ընտրութեան թրուականը հոլոված է:

Վարիչ մը փոխանակելու համար ընտրուած որ և է վարիչ անդամ պաշտօնին վրայ կը մնայ միայն մինչև այն թուականը՝ ուր կը լրանայ իր փոխանակելու պաշտօնավարութեան պայմանաժամը:

Ատենագրութիւնները պարտին ստորագրուիլ՝ նիստին նախագահող վարիչին և նոյն նիստին ներկայ գտնուող ուրիշ վարիչ անդամի մը կողմէ: Ատենագրութիւններէն հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ Կեղր. վարչ. ժողովի Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

ՎԱՐԻՑ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԵՐԱՇԽԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 11.

Իւրաքանչիւր վարիչ անդամ պարտաւոր է իր պաշտօնավարութեան իբր երաշխիք տալ՝ դրամով, կամ կեղր. ժողովի որոշմամբ ընդունուած արժեթուղթներով, երկու հարիւր անգլ. ոսկիի գումար մը, և կամ հաստատուն կալուածի մը վրայ համարժէք երաշխաւորութիւն մը:

Սոյն աւանդը պիտի գրուի և պիտի մնայ Գրէտի Լիօնէ գրամատան Գահիրէի Մասնաճիւղը՝ մինչև որ վարիչ անդամին պաշտօնավարութիւնը վերջ գտնէ, Ընդհանուր ժողովի կողմէ պարտագերծութիւնը հաստատուելով:

Իբրև երաշխիք տրուած արժեթուղթներուն կտրօնները պիտի գանձուին իրենց սեպհականատիրոջ ձեռքով՝ անոնց յաջորդական պայմանաժամներուն:

ԳԻՒԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 12.

Կեղրոնական ժողովը ամէն տարի իր անդամներուն մէջէն կ'ընտրէ Ատենապետ մը, երկու Փոխ-Ատենապետ, Ատենադպիր մը և Գանձապետ մը:

Այսուհանդերձ, առաջին ինը տարուան շրջանին համար վսեմ. Պօղոս Փաշա Նուպար պիտի ըլլայ Ատենապետ կեղր. վարչ. ժողովի:

Եթէ ու է պատճառաւ այդ պաշտօնը թափուր մնայ, Ատենապետը պիտի ընտրուի կեղր. վարչ. ժողովին կողմէ՝ երեք տարուան շրջանի մը համար:

Ժողովը պիտի ունենայ վճարեալ ընդհանուր քարտուղար մը, ինչպէս նաև այլ պաշտօնեաներ՝ երբ որ անոնց պէտքը զգացուի Միութեան ընդարձակման բերմունքովը:

Ժողովը կրնայ բացառապէս և առժամաբար իր անդամներէն մէկուն յանձնել ընդհանուր քարտուղարութեան պաշտօնը:



ԿԵԴՐ. ՎԱՐՑ. ԺՈՂՈՎԻ

ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 13.

Ա.— Կեղր. ժողովը կը գումարուի ամէն անգամ որ Միութեան շահերը կը պահանջեն: Գումարումները տեղի կ'ունենան Ատենապետին, կամ անոր բացակայութեանը՝ Փոխ-Ատենապետներէն մէկուն հրաւերով:

Ժողովը կը գումարուի՝ երբ երեք անդամներ պահանջեն:

Բացակայ վարիչ անդամները կրնան իրենց ձայնը տալ ժողովի մէկ ուրիշ անդամին:

Բ.— Որպէսզի որ և է գումարման մը մէջ տրուած որոշումները օրինական համարուին, պէտք է որ ժողովին անդամներուն խակական թիւին գոնէ կէսը ներկայ գտնուի: Աւնուազն երեք անդամներու ներկայութիւնը անհրաժեշտ է. միւս անդամները կրնան ձայներնին իրենց պաշտօնակիցներուն տալ:

Կեղրոնական վարչական ժողովի որոշումները՝ ներկայ և ներկայացուած անդամներու ձայներուն մեծամասնութեամբ կը արուին:

Չայներու բաժանման պարագային՝ Ատենապետին ձայնը գերակշիռ է:

Ընտրութեանց պահուն, եթէ նիստին ներկայ գտնուող անդամները բացարձակ մեծամասնութիւն չի կազմեն, երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի, և այդ պարագային՝ համեմատական մեծամասնութիւնը բաւական կը նկատուի:

Սակայն և այնպէս, ոչ մէկ պարագայի մէջ, անգամ մը իր ձայնէն զատ՝ մէկէ աւելի ձայնի իրաւունք կրնայ ունենալ:

1004
15216

Ա.— Կեդր. վարչ. ժողովը Միութեան վարչութեան և գործառնութեանց մասին ամենաընդարձակ իշխանութեանց տէր է:

Մասնաւորապէս ամէն իրաւասութիւն ունի՝

Ընկերութեան նպատակին իրադրման ծառայող ամէն գործ կատարելու: Հիմնելու կամ նպաստով օժտելու վարժարաններ, մատենադարաններ, ընթերցասրահներ, արհեստանոցներ, հիւանդանոցներ, խնամատուններ, որբանոցներ, և ուրիշ նմանօրինակ հաստատութիւններ:

Օգնելու և օժանդակելու ամէն հայու՝ առանց դաւանանքի խտրութեան: Հայազգի զիւղացիներուն նպաստելու, անոնց հայթայթելով՝ հունտ, կենդանի, գործիք և մշակելի հողեր:

Գիւղերու մէջ մշակութեան վրայ այժմու գործնական գիտելիքները տարածելու, տեղական արհեստագործութեանց զարգացումին նպաստելու, երկրին պայմաններուն համապատասխան եղանակով աշխատութեան և արդիւնաբերութեան նոր միջոցներ ստեղծելու:

Սովէ, հրդեհէ կամ ուրիշ որ և է աղէտքէ և համաճարակէ արկածեալ վայրերու բնակիչներուն օգնութեան հասնելու:

Ընդունելու կամ մերժելու որ և է նուիրատուութիւն և կտակ:

Պրէ Յօդուածի մէջ նշանակուած հասոյթի ազրիւրներէն զուրս՝ ուրիշ ո և է հասոյթի ազրիւր ևս ստեղծելու:

Որ և է գումար գանձելու և վճարումներ կամ ծախքեր ընելու, շարժուն և անշարժ որ և է ստացուածքի արանալու, որ և է արժէթուղթներ կամ այլ աւանդ յանձնելու կամ վերստանալու:

Ընկերութեան շահին և օգուտին համար՝ որ և է շարժուն ու անշարժ կալուած ստանալու կամ ձեռքէ հանելու, որ և է փոխանոր-

դագիր յանձնելու կամ որ և է փոխորիտակ (fidéi-commis) հաստատելու: Ժողովին վերապահուելով վարչական բոլոր իրաւունքները՝ այդ կերպով մատակարարուած գոյքերը և ստացուածքները ետ առնելու կամ ուրիշներու փոխանցելու, ինչպէս նաև յիշեալ փոխանորդութեանց և փոխորիտակներուն վերջ աալու:

Վերոյիշեալ իրաւասութիւնները բացատրիչ են և ոչ թէ սահմանարիւղ: մէկ խօսքով՝ Կեդր. վարչ. ժողովը ունի բոլոր այն իրաւունքները որ յատկապէս Ընդհանուր ժողովի վերապահուած չեն:

Կեդր. վարչ. ժողովը կարող է իր իշխանութեան և իրաւասութեանց ամբողջութիւնը կամ անոնց մէկ մասը յանձնել իր անդամներէն երկուքէն կամ երեքէն բաղկացած մէկ կամ աւելի յանձնախումբներու:

Բ.— Ժողովը՝ Գրէտի Լիօնէի Գահիրէի մասնաճիւղին, կամ անոր չգոյութեանը՝ ուրիշ առաջնակարգ դրամատան մը պիտի յանձնէ պատրաստ արժէթուղթները կամ բաժնեթուղթները: ինչպէս և տրամադրելի գումարները:

Գ.— Ժողովը իր պաշտօնաթերթին մէջ պիտի հրատարակէ Ընկերութեան տարեկան հաշուեկէիւրը, անոր մէկ պատճէնը պիտի Ղրկէ իւրաքանչիւր Մասնաճիւղին, և Ընդհանուր ժողովին պիտի մատուցանէ ան իր պաշտօնալարութեան տեղեկագրին հետ:

Նմանապէս՝ իր պաշտօնաթերթին մէջ Կեդր. ժողովը երեք ամիսը անգամ մը պիտի հրատարակէ Ընկերութեան նոր անդամներուն ցանկը, անոնցմէ իւրաքանչիւրին մուտքի տուրքին և բաժնեզիննութուն գումարները, ինչպէս ընդունուած նուիրատուութիւնները և կտակները:

Դ.— Կեդր. վարչ. ժողովի իւրաքանչիւր անդամը կրնայ յետադայ յօդուածին մէջ սահմանուած Մասնաճիւղներու Ժողովներուն ներկայ գտնուիլ՝ առանց ջուէի իրաւունքի:

Յ Ե Ղ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր

ՄԱՍՆԱՃԻՂՆԵՐՈՒ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՆՈՆՑ ԵՐՁԱՆԱԿՆԵՐԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 15.

Ա.— Մասնաճիւղներու Տեղական Ժողովներ կրնան կազմակերպուել Կեդր. Վարչական Ժողովի որոշմամբ՝ այն ամէն տեղեր ուր Միութիւնը ունի գէթ տասը անդամ:

Կեդր. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ իւրաքանչիւր Մասնա-ժողովի գործունէութեան շրջանակը: Միշտ և հանապազ կարող պիտի ըլլայ ընդարձակել կամ անձկացնել այդ շրջանակը:

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐՈԳՈՒՍԸ

Բ.— Իւրաքանչիւր Տեղական Մասնաժողովի անդամներուն ընտրութիւնը՝ Կեդրոնական Վարչական Ժողովին վաւերացմանը կ'ենթարկուի:

Տեղական Մասնաժողովներու անդամ կրնան ըլլալ անոնք միայն որ առնուազն Ե. Ղ. 15 կը վճարեն իբրև ամսաբաժին: Նորագումը Կեդր. Վարչ. Ժողովին միջոցաւ կը կատարուի, ընտրելիներու կրկնապատիկ ցանկի մը վրայէն, որ կը պատրաստուի նոյն շրջանակին մէջ ամսական առնուազն Ե. Ղ. 15 անդամաւճար հատուցանող անդամներէն բաղկացած Բնդհանուր Ժողովի մը կողմէ:

Սոյն Ժողովը կը գումարուի իր Ատենապետին հրահրագիրով, իր և կամ իր բացակայութեանը՝ Փոխ-Ատենապետին նախագահութեամբ: Յիշեալ Ժողովին մէջ, իւրաքանչիւր անդամ այնչափ ձայն ունի որչափ անդամ Ե. Ղ. 15 կը պարունակէ իր վճարած ամսաբաժինը: Եթէ ներկայ անդամներու ձայներով բացարձակ մեծամասնութիւն չգոյանայ, երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի, և այս պարագային՝ համեմատական մեծամասնութիւնը բաւական կը նկատուի:

Սակայն և այնպէս, այն տեղերը ուր ամսաբաժին առնուազն Ե. Ղ. 15 վճարող անդամներու բաւականաչափ թիւ մը տակաւին գոյացած չէ, Կեդր. Վարչ. Ժողովը կրնայ արտօնել, բացառաբար և առեմտապէս, որ աւելի պակաս ամսաբաժին վճարող անդամները կարենան Տեղական Ժողովներուն անդամակցել և տեղայն Բնդհանուր Ժողովին խորհրդակցութեանց ևս մասնակցել:

Բացառաբար, Գահիրէի մէջ, Միութեան Կեդրոնատեղին, Տեղական Մասնաժողովը պիտի ընտրուի, ամէն տարի, Կեդր. Վարչ. Ժողովին կողմէ, որուն ուղղակի պիտի տայ իր պաշտօնաւարութեան համարը:

Գ.— Իւրաքանչիւր Մասնաժողովի անդամներու թիւը առնուազն 3 պիտի ըլլայ՝ ըստ որոշման Կեդր. Վարչ. Ժողովի:

Վերանորոգումը պիտի կատարուի ներկայ Յօդուածիս Բ. հատուածին տրամադրութեան համաձայն, տարին անգամ մը՝ կ'իստովին: Եթէ անդամներու ամբողջական թիւը անուշիչ է՝ առաջին վերանորոգումը կէսէն մէկ պակաս անդամներու համար պիտի ըլլայ: Վիճակաւ պաղրած անդամները վերընտրելի են:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԴԻՒԱՆՆԵՐԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 16.

Իւրաքանչիւր Մասնաճիւղի Ժողով իր անդամներուն մէջէն ամէն տարի կ'ընտրէ Ատենապետ մը, Ատենադպիր մը և Գանձապետ մը:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ 17.

Կեդրոնական Ժողովի խորհրդակցութեանց համար 13րդ Յօդ.ի մէջ հաստատուած կանոնները՝ նմանապէս գործադրելի են Մասնաճիւղներու Ժողովներու խորհրդակցութեանց համար:

Մասնաժողովներու ատենադրութիւնները, նիստին ատենապետող անդամին և նոյն նիստին ներկայ զանուոզ ուրիշ մէկ անդամի

մը կողմէ պիտի ստորագրուին: Ատենադրութիւններէ հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածները՝ ժողովին Ատենապետին կամ Փոխ-Ատենապետին կողմէ պէտք է ստորագրուած ըլլան:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՊԱՇՏՈՆԸ

307 ՈՒԱԾ 18.

Ա.— Մասնաժողովները, իրենց շրջանակի սահմաններուն մէջ, Միութեան նոր անդամ կը գտնեն, կը ջանան անոնց թիւը աւելցնել, իրենց տրամադրած ամէն միջոցներով անոր ծաւալմանը կ'աշխատին, կը գանձեն մուտքի տուրքերը և բաժնեդիւնները, և նուիրատուութեանց գոյացումին ջանադիր կ'ըլլան: Ամէն անգամ որ նոր անդամակցութիւններ և նուիրատուութիւններ կ'ըլլան՝ նորընտիր անդամներու և նուիրատուներու անունները և հասցէները պարտին ծանուցանել կեդր. վարչ. ժողովին, որ անոնք կը հրատարակէ պաշտօնական ցուցակներու միջոցաւ՝ ըստ 1/4րդ Յօդ. Գ. հաստատուածի տրամադրութեան: Մուտքի տուրքերը, ամսավճարները, ինչպէս նաև հազար ֆրանքէ նուազ եղող նուէրները, կը դանձուին Մասնաժողովին Ատենապետէն՝ կամ Փոխ-Ատենապետէն և Գանձապետէն, իսկ անոնց բացակայութեանը՝ անոնց պաշտօնը առժամաբար վարելու համար Մասնաժողովին կողմէ անուանուած երկու անդամներուն ստորագրութիւնը կրող ընկալապիրներու և անդորրապիրներու փոխարէն: Իսկ 1.000 ֆրանքէ աւելի նուիրատուութիւնները պէտք է ուղղուին Գանձապետին՝ Ընկերութեան կեդրոնատեղին, նշանակելով աղբիւրը և յարակից մանրամասնութիւնները:

Տեղական ժողովները, իրենց շրջանակին մէջ, կրնան իրենց հսկողութեան և պատասխանատուութեան տակ՝ կազմել Օժանդակ-Մասնաժողովներ, նաև մասնաւոր և առժամանակեայ Յանձնախումբներ, անոնց փոխանցելով իրենց յատուկ իրաւասութիւնները՝ մասամբ կամ ամբողջովին:

Կարող են առաջարկներ ներկայացնել կեդր. վարչ. ժողովին, և անոնց անդամները կրնան ներկայ գտնուիլ յիշեալ ժողովին նիստերուն՝ երբ Գահիրէ գտնուին, առանց սակայն քուէի իրաւունքի:

Բ.— Մասնաժողովները պարտաւոր են կանոնաւոր տոմարակալութիւն մը ունենալ, և Գահիրէ՝ Ընկերութեան կեդրոնատեղին ղրկել գոյացած դրամները:

Իրաւունք չունին գործածելու ոչ մէկ դումար՝ բացի մանր պէտքերու համար հարկաւոր եղած ծախքերէն, ասոնց ամբողջութիւնը անդամավճարներուն 15%ը չանցնելու պայմանով:

Գ.— Իւրաքանչիւր վեցամսեայի վերջը, պարտաւոր են կեդր. վարչ. ժողովին ղրկել իրենց հաշիւները՝ իրենց շրջանակին վերաբերեալ ամէն խնդիրներու մասին պատրաստուած տեղեկագրի մը հետ:

Դ.— Կեդր. վարչ. ժողովէն առանց նախապէս արտօնութիւն ստանալու՝ չեն կարող ընել որ և է ծախք, կամ որ և է որոշում ստալ և կամ յանձնառութիւն մը կնքել: Պարտաւոր են ամենայն ճշգրտեամբ համակերպիլ կեդր. վարչ. ժողովի որոշումներուն, որ իրաւունք ունի Մասնաժողովներու անդամները հրաժարեցնելու՝ երբ անոնք պարտաղանց գտնուին, և անոնց տեղ առժամայ յաջորդներ կարգելու, մինչև որ վերողորեալ 15րդ Յօդ. մէջ նշանակուած երկու անակաւ վերջնական ընտրութիւն կատարուի:

Ը Ն Գ Ղ Ա Յ Ո Ւ Ի Բ Ժ Ո Ղ Ո Վ

307 ՈՒԱԾ 19.

Ա.— Ընդհանուր ժողովը Միութեան անդամներուն ընդհանրութիւնը կը ներկայացնէ: Ընկերութեան բոլոր շահերուն մասին գերիշխանօրէն կը անօրինէ: Իր որոշումները պարտաւորիչ են ամենուն, նոյն իսկ բացականերուն և տարակարծիքներուն համար:

Բ.— Ընդհանուր ժողովի մասնակցելու համար, գոնէ երկու տարիէ ի վեր անդամ եղած և այդ միջոցին ամսական առնուազն Ե. Գ. 25 անդամավճար յարատեւաբար հատուցած ըլլալու է: Սա-

կայն և այնպէս ինչպէս որ ներկայ յօդուածիս Զ. հատուածին մէջ ըստեւած է, առաջին Ընդհանուր Ժողովին ներկայ գտնուելու համար՝ որ երրորդ տարուան վերջը տեղի պիտի ունենայ՝ բաւ է Չրդ և Յրդ տարիները միայն վճարած ըլլալ: Իւրաքանչիւր անգամ իրաւունք ունի այնչափ ձայնի որչափ անգամ Ե. Դ. 25 կը պարունակէ իր ամսավճարը:

Իրաւամբ Ընդհանուր Ժողովի անդամ են՝ Տեղական Ժողովներու անդամները, ինչպէս նաև Բարերար և Պատուոյ անդամները՝ որոնց մասին խօսուած է Տրդ Յօդ.ի մէջ: Բացի այն ձայներէն՝ զոր կրնան ունենալ իբրև բաժնեւէջար անգամ, Բարերար անդամներէն իւրաքանչիւրը 10 ձայնի, իսկ Պատուոյ անդամներէն իւրաքանչիւրը 4 ձայնի իրաւունք ունի: Սակայն անգամ մը, ոչ մէկ պարագայի մէջ, իր ունեցած ձայներն ալ մէջը ըլլալով, 20 ձայնէ աւելի չի կրնար ունենալ:

Ընդհանուր Ժողովի մասնակցելու իրաւունք ունեցող որ և է անգամ կրնայ իր տեղը ներկայացուցիչ կարգել՝ այդ իրաւունքը անձնապէս ունեցող ուրիշ որ և է անգամ մը: Ներկայացուցիչը իր ձայներէն զատ՝ կ'ունենայ իր փոխանորդեալին ձայներն ալ:

Փոխանորդագիրներու ստորագրութիւնը պարտի վաւերացուած ըլլալ օրինական ձևակերպութեամբ, և կամ կեղբ. վարչ. ժողովի կամ Տեղական Մասնատողովին Ատենապետին և կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ:

Գ.— Ընդհանուր Ժողովը կը գումարուի միայն իր կեդրոնատեղին՝ Գահիրէ, օրակարգի խնդիրներուն ամփոփումը պարունակող հրահանգի ազդով մը՝ որ կեղբ. վարչ. ժողովի կողմէ կը հրատարակուի իր պաշտօնաթերթին մէջ, գումարման համար որոշուած օրէն առնուազն երեսուն օր առաջ:

Դ.— Անոր կը նախադասէ կեղբ. վարչ. ժողովի Ատենապետը, իսկ անոր բաղադրութեան՝ Փոխ-Ատենապետներէն մին կամ Ատենապետի պաշտօնը կատարող վարիչ անդամը:

Ատենապետը կ'անուանէ Ատենադպիրը: Բուէախոյզ կը նշանակուին ամէնէն աւելի ձայն ունեցող և այդ պաշտօնը յանձն առնող երկու անդամներ:

Ե.— Կեղբ. վարչ. ժողովի կողմէն սրատրաստուած օրակարգին մէջ նշանակուած խնդիրներէն զատ՝ ուրիշ նիւթերու վրայ կարելի է խորհրդակցիլ:

Ընդհանուր Ժողովի ատենագրութիւնները պիտի ստորագրուին՝ վերոյիշեալ կերպով կազմուած դիւանի անդամներէն: Ատենագրութիւններէն հանել պէտք եղած ընդօրինակութիւնները կամ քաղուածները, կեղբ. վարչ. ժողովին Ատենապետին և կամ Փոխ-Ատենապետներէն մէկուն կողմէ պէտք է ստորագրուին:

Զ.— Ընդհանուր Ժողովը կը գումարուի կանոնաւորապէս ամէն տարեշրջանի առաջին եռամսեային. բացի առաջին նիստէն որ երեք տարուան շրջանէ մը ետք տեղի պիտի ունենայ:

Լսելու համար կեղբ. վարչ. ժողովին տեղեկագիրը՝ Ընկերութեան կայտութեան վրայ, և ընդունելու համար բոլորուած տարեշրջանին հաշիւները, որ նախապէս՝ Ժողովին գումարումէն 15 օր առաջուրնէ սկսեալ՝ անդամներու տրամագրութեան տակ դրուած ըլլալու են Միութեան կեդրոնին մէջ:

Ներկայացուած հաշիւները վաւերացնելու կամ ուղղելու համար՝ երբ հարկ ըլլայ՝ վարիչներուն ընտրութիւնները կատարելու համար:

Եւ անօրինութիւններ ընկու համար որ և է բացառիկ կարեւորութիւն ունեցող խնդիրներու մասին՝ որ հրաւիրագրին մէջ նշանակուած օրակարգը կրնային անցնիլ:

Ի.— Վերոգրեալ խնդիրներէն զատ, Ընդհանուր Ժողովին անկէ կանոնադրին վրայ ըլլալիք փոփոխութիւններուն, յաւելումներուն, կամ յտարաւումներուն մասին որ և է որոշուած տալ, մասնաւորաբար՝

ա) Ընկերութեան նպատակը կազմող ստարկաներէն մէկուն ընդարձակումը, սեղմումը, բարեփոխումը կամ ձևափոխումը, տաանց սակայն և այնպէս որ և է պարագայի մէջ՝ փոփոխելու կամ խաթարելու իր ընդհանուր նպատակը և իր հիմնական պայմանները (Յօդ. ուած 1 և 8):

բ) Ընկերութեան անուան ձևափոխումը կամ այլափոխումը, պայմանաւ որ այդ փոփոխութիւնը՝ ընդհանուր նպատակին և հիմ-

նական հանդամանքին որ և է այլայլում կամ վնաս չի պատճառէ և ևնթաղրել խակ չխաայ :

դ) Ընկերութեան որ և է եղանակաւ ձուլումը՝ համանման կամ նոյնատեսակ ուրիշ ընկերութեան մը հետ, և կամ վերջապէս Ընկերութեան կազմալուծումը :

Վերոգրեալ պարագաներուն թուումը լսկ բացատրիչ է և ոչ թէ սահմանափակող :

Ը. — Վերև (ա) (բ) և (գ) հատուածներով թուարկուած պարագաներուն մէջ, ժողովին խորհրդակցութիւնները այն ստան միայն օրինական կ'ըլլան, երբ ներկայ և ներկայացուած անդամները՝ Ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն ամենէնքէն կէսը կը կալմեն, և որոշումը օրինական ըլլալու համար՝ պէտք է ընդունուի մեծամասնութենէ մը, որ ներկայ և ներկայացուած անդամներուն ձայներուն գէթ երեք քառորդը ներկայացնէ : Այսուհանդերձ, եթէ նիստին մէջ Ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն կէսը անձամբ ներկայ չէ, ժողովը կրնայ՝ վերջիչեալ մեծամասնութեամբ՝ առժամանակեայ որոշում մը ապա : Այդ պարագային, նոր Ընդհանուր ժողով մը կը գումարուի՝ երկու շաբաթուան նուազագոյն ժամանակամիջոցի մը մէջ, ընդունուած առժամեայ որոշումը պարունակող նոր ազգայնորով մը, և այդ որոշումը վերջնական կ'ըլլայ, եթէ նորոգ գումարման մէջ ներկայ և ներկայացուած անդամներուն ձայներուն երեք քառորդին կողմէ ընդունուի : Բաւական է որ ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն գոնէ մէկ քառորդը՝ այդ նիստին ներկայ ըլլայ կամ ներկայացուցիչ ունենայ :

Ուրիշ որ և է պարագայի մէջ, Ընդհ. ժողովը՝ թի՛ տարեկան և և թէ արտակարգ նիստ գումարուելուն՝ վաւերական կերպով խորհրդակցած կ'ըլլայ, եթէ ներկայ և ներկայացուած անդամներուն թիւը գոնէ մէկ չինգերորդը ըլլայ՝ Ընդհանուր ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող անդամներուն թիւին, խակ որոշումները կը արժուին ձայներու մեծամասնութեամբ : Եթէ այդ օրինական թիւը չի գոյանայ, երկրորդ նիստ մը կը գումարուի և վաւերական կերպով կը խորհրդակցի ինչ որ ալ ըլլայ ներկայ և ներկայացուած անդամներուն թիւը :

Ընտրութեանց պարագաներուն մէջ, եթէ բացարձակ մեծամասնութիւն չի կայանայ, երկրորդ քուէարկութիւն մը կը կատարուի և այն ստան համեմատական մեծամասնութիւնը բաւարար կը նկատուի :

Թ. — Կեդր. վարչ. ժողովը պարտաւոր է տարեկան գումարման օրակարգը անցընել այն առաջարկութիւնները, որ այս նպատակով իրեն ներկայացուած են Նոյեմբեր ամիսէն առաջ՝ Ընդհանուր ժողովի մասնակցելու իրաւունք ունեցող և գէթ յիսուն ձայնի ամբողջութիւն մը ներկայացնող ստանալին հինգ անդամներու խումբի մը կողմէ :



Կ Ա Ջ Մ Ա Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

3070140 20.

Կազմալուծման պարագային՝ օրուան Ընդհանուր ժողովը պէտք եղած որոշումը պիտի ստաց զրամի գործածութեան և գոյքերու անօրինութեան մասին, կանոնագրիս Յօդ. 1 ուլ սահմանուած նպատակին համեմատ :

Իր յարմար դատած կերպով պիտի կրնայ որոշել վերջիչեալ զրամին և ինչքերուն միշտ միեւնոյն նպատակին համար՝ յատկացումը կամ փոխանցումը :

Մասնաւոր նպատակներու համար եղած նուիրատուութիւններէ և կտակներէ զոչացած եկամուտները՝ պիտի գործածուին ըստ առաջնոյն նուիրատուներուն և կտակարարներուն կանխորոշած նպատակին :

Մայիս, 15 Վայրիլ 1906. Ս. Չասկի առաջին օրը, ստորագրեալներս՝ համախմբուած Գահիրէ, վսեմ. Պօղոս փառա Նուպարի բնակարանը, կազմեցինք ընկերութիւն մը

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

անուամբ, համաձայն սրամադրութեանց եւ պայմաններուն ներկայ կանոնագրիս՝ որ կը կրէ այսօրուան թուականը եւ մեր ստորագրութիւնները:

Ընկերութեանս վարչական առաջին ժողովը բաղկացած է՝ կանոնագրին 10րդ ֆոդուածին մէջ նշանակուած Տասը անդամներէն, եւ այսօրուրնէ ընկերութիւնս կազմակերպուած հռչակուած է:

Գահիրէ, 15 Վայրիլ 1906

(Ստոր.)

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ

ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱԹՈՆ ՊԷՅ

Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Մ. ՄԱՐԿՈՍՅՈՍ ՊԷՅ

Կ. ՇԷՐԻՏՃԵԱՆ ՊԷՅ

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

ԱՌԱՔԵԼ ՆՈՒՊԱՐ ՊԷՅ

ՏՕՔՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ


ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԵԱՆ

Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ներկայ կանոնագրին մէջ արագրուած են այն քարեջրխոսքիւնները՝ զոր Միութեան Ընդհանուր Ժողովը քաւարկած է, իր 23 Մայիս 1909, 8 Մայիս 1910 եւ 17 Ապրիլ 1911ի նիստերուն մէջ:

Սոյն կանոնագիրը Օսմ. կառավարութեան ներկայացուած ըլլալով, 131 թիւ եւ 3 Մարտ 1910 թուականաւ օրինական իմնութապէր ստացուած է:

Սոյն կանոնագիրը Միութեան սեփական Տպարանին մէջ վերատպուած է 1913 Յունվար 25 ին:



« Ազգային գրադարան



NL0215861

43. 205